

մակարդակին հասնելու համար, ան օժտուած էր գրական նուրբ հասկացողութեամբ, նաշակով, լեզուական հմտութեամբ եւ անգիջող խստապահանջութեամբ եւ պարկեշտութեամբ: Անգլիերէն լեզուն գաղտնիք մը չունէր իրեն համար եւ իր փորձածը սովորական թարգմանութիւն չէր: Իր նախադասութիւններու կառուցումին մէջ ան յաջողեցաւ դնել այն յանելիալ յատկութիւնը, որով հայկականութիւն կը հոսէր իր տողերէն: Այս երեւոյթը ինծի համակրանով դիտել տուին անգլիացի բարեկամներ: Իր թարգմանութիւնները հայկական հէֆեսթ-ներ եւ Թոթովենցի պատմութեանը, քանիցս ձայնասփռուեցան B.B.C.էն եւ այլ ռատիոկայաններէ:

Տեղին է անդրադառնալ որ իր կեանքի ընկերը՝ դաշնակահարուհի՝ Էլենա

Գիւտեանն ալ, իր ամուսնոյն գրական գրադումին զուգահեռ, գնահատելի աշխատանք տարաւ արդի հայ երաժշտութիւնը ներկայացնելու հայ եւ օտար հասարակութեան եւ Purcell Room երաժշտասրահին մէջ դաշնամուրային մենանուագ մը տուաւ, որուն յայտագիրը ամբողջութեամբ կազմուած էր արդի հայ երաժշտական յօրինողներու գործերէն:

Միշտ Գիւտեան, իր լուրջ եւ անաղմուկ աշխատանքով, առանձինն, յաջողեցաւ կատարել այն ինչ որ մեր սփիւռֆահայ մշակութանուէր խոշոր կազմակերպութիւններէն կ'ակնկալուի:

Աղօթք եւ օրհնէմք իր բարի հոգիին, սէր եւ յարգանք իր նուիրումին եւ վաստակին:

ԿԱՐՊԻՍ ԵՍԱՅԵԱՆ

ՖՐԱՆՍԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ 1915Ի ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՍՏԱՏԵՑ

Զորեքշաբթի 17 Յունիս, 1998, Պատրիարք Արքայանը ընկերակցութեամբ Արտաֆին Յարաբերութեանց Վարիչ՝ Տ. Արիս Եպս. Շիրվանեանի, Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի եւ Աւագ Թարգման Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեանի, այցելեց Ֆրանսայի Դեսպան՝ Վսեմ. Ժան Նուէլ Տը Պուլեան Տը Լագոսթին Թիւ Ավիվի իր դեսպանատան մէջ: Սիրալիր զրոյց մը տեղի ունեցաւ: Պարոն դեսպանը հետաքրքրուեցաւ մեր եկեղեցիով ընդհանրապէս եւ մասնաւորապէս պատրիարքարանիս եւ Սուրբ Տեղեաց վիճակով: Ապա Պատրիարք Արքայանը բացայայտեց մեր այցելութեան

նպատակը որ էր շնորհակալութիւն յայտնել յանուն Իսրայէլի եւ Յորդանանի մեր հայութեան՝ Ֆրանսական խորհրդարանին միաձայնութեամբ առած Մայիս 29, 1998ի որոշման, 1915ի Հայկական ցեղասպանութիւնը հրապարակաւ քննադատելու: Ու նաեւ այս ուղղութեամբ նամակ մը յանձնեց՝ Նախագահ Ժագ Շիրաֆին փոխանցելու համար: Դեսպանը եւս իր գոհունակութիւնը յայտնեց յիշեալ որոշման համար յիշելով նաեւ ֆրանսահայութեան նպաստը ֆրանսական պետութեան:

Պատրիարք Արքայանը հրաւեր ուղղեց դեսպանին այցելելու Պատրիարքարան:

Ա.Ս.